




ՀԱՆՐԱՍՄԵՍՐՈՎՊԵՆ

ՀԱՐԱՆ Բ. ՎԵՑԱՄՍԵԼՅ

1862 ՕԳՈՍՏՈՍ 1.

ԹԻԻ 3.

Հրատարակի ամեն ամսու Աին և 15ին : Վեցամսեայ շրջանին դիր 50 դահեկան արտիկ : Ստորագրութեան տեղերն են Ղալաթա 3. Սիւհեմիսեան տղարանը : Չմիւռնիա թանգարանը : Ստորագրական բնիկութեան : Պոլիս թանգարանին գրասենտիկը : ուր կը ծախուի նաև Վ. Հրատարակչութեան 40 դահեկան : Միջոցիւ Վեքանութեան թանգարան : Գուրու երթալից հանդէս : ներսու ճամբուն ծախքը առնողին վրայ է : Մեղուզուած գրութիւններ եւ շին տրուիր, թէ հրատարակին և թէ հրատարակին :

ՅՕԴՈՒԵԾ Ե.

ԼԻՄԱՆԱՊԱՏ

(Տէս Բ. Հրատարակ. Թիւ 1)

Այս անապատը ինչպէս շատերու ծանօթ է, իր հնութեամբը և դրից դեղեցիկութեամբը, Վանայ ծովին արեւելեան հարաւային կողմը թէ և ապառաժուտ, բայց ամենէն բարեբեր կղզի մի է, ամեն կերպ սղաղա տու ծառերով լի, նա մանաւանդ անուանի է նորա նուշը (պատեմ) ու ձմերուկը. իր մէջ եղած քարաշէն յանուն Ս. Վեդրգայ կառուցեալ դմբէթաւոր եկեղեցին՝ Հայաստանի առաջին կարգի փառաւոր եկեղեցեաց կարգը կրնայ սեպուիլ. ունի իր մէջ 16 ի չափ վարդապետներ, քսանէն աւելի ազգին հայր ուսուցիչ անպիտան միաբան կոչեցեալներ, որք իրենց գեշ վարուցը համար հոն եկած են, որպէս զի այս միջոցով կարենան նպատակնուն հասնիլ . . . 10 նի չափ ալ մշակներ ու ծառաներ կամ փոքրաւոր ըսուածներ և մէկ վանահայր մի : Այս կղզեաց գիմացը հարաւային կողմէն Դոնի գոռն անունով վանք մի

կայ փոքր եկեղեցիով մի, վերահայու վարդապետով, և պապա ով մի, վանքին հասոյթներ հոս կը հաւաքուին նախ և տալ տակաւ սակաւ փոքր նաւակով մը կղզին կը խրկեն. վանքին ունեցած կալուածները իրեն բաւակաւ նանալէն ղառ՝ կրնամ ըսել, կրնայ ժառանգաւորաց դպրոց մի տղարան մի և քանի մի թեմական գիւղերու մէջ մասնաւոր վարժարաններ ալ պահել. բայց իր կալուածէն տասնապատիկ աւելի թեմական գիւղերէն կը կուղտտեն վանականք. խիստ ապաւայէն են այս վանականներ, վասն զի իւրաքանչիւր միաբան կամ վարդապետ՝ քսան ընտանիքէ բաղկացեալ ընտանիքի մի տարեկան ծախքով, ամիս մի կամ երկուս մեծ խնայողութեամբ հազիւ կրնայ խաբէրնել միայն սովամահէն ինքզինքը ապաւելլով :

Եթէ ըսեմ բոլոր վարդապետներ անգործութեան մէջ են, կը սխալիմ. վասն զի շատերը ծանր ծանր սրաշտոններ ունին, որք նուիրակ, որ է կողոստիւ, որք հարստներաց վերահայու ազգակիցներ իրարու խնամիլ և ներու համար կաշառակեր, որք մարդ ծէծելու ծանր սրաշտոնի տէր, և որք երկրապոր

ծուծեան վերակացու, միշտ ընտանիքէ չի դատուելով. . . վերջապէս խեղճ ու հարբու տահարեալ ժողովրդոց հոգւոց, մարմնոց և ստածուածոց տէր ու դատաւոր. . . :

(Հարուսիք)

VÉRITÉS ET SÉVÉRITÉS

Վեհուռն ծանօթ է ճշմարտութիւնը և լիազառութիւնը (VÉRITÉS ET SÉVÉRITÉS) ըստած գրքին յարգը. մենք չենք ուզեր երկարորէն խօսիլ, այլ տա կուղէնք իմացնել որ եռանդուն փափաք մը գրգռեց զմեզ թարգմանել զայն մաս մաս և հրատարակել, ու ահոր մէջ եղած վեհ խորհրդածութիւնները մեր ազգին մարմանդը ցանել. եթէ Հայ մտքի մը ծնունդը դրաւած է օտար աղբաց զարմանքը, սրբափ առաւել մեր ազգին : Այս և սորա թարգմանութեան դժուարութիւնը կը խոստովանիմք, և մեր ըրածը յանդգնութիւն մը պիտի ըլլար, եթէ ՄԵԾԱՐԳՈՅ ՀԵՂԵԱԿԻՆ ձեռնառութիւնը մեզ խրախոյս չըլլար, և սիրելի աղբայնոցս թերութեանցս միշտ ներումը մեզնէ անձանօթ ըլլար :

ԹՎՏՐՈՆ

Թատրոնը, ազգի մը և բոլոր աղբաց հաւարակութեան, դադարաւորաց, զգացմանց, և կրից մեծ տաճարն է :

Վրութենէ աւելի ազգու, և գրքէ աւելի կենդանի, մարդու աջացը, սրտին և հոգւոյն կը խօսի, աւելի կենդանի զգացումներ կը շարժէ, և անչափ խոր շաւիղներ կը թողու :

Կրկն չէ որ կը գրէ և կը խորհրդածէ, առաստելը չէ որ կը կատակէ և կ'զբօսցնէ, ճշմարիտ ուսումը չէ որ կ'ուսուցանէ :

Այլ մարդն է որ խօսքով կը յայտնէ մարդուն իր ուրախութիւնները կամ վշտերը, և ինքզինքը ինչպէս որ է անկաղձ և անզարդ կը ցուցնէ ինչ վիճակի մէջ որ ըլլայ, երջանիկ կամ թշուառ :

Հոս կը տեսնուի մարդկութիւնը մտերմութեան անզարդութեան, և առանձին կենակցութեան մէջ :

Իրեն օժանդակ ունի խօսքին աղղեցութիւնը և գեղեցկութիւնը և անդիմադրելի համակրութիւն որ մարդ կ'զգայ իւր նմաններուն համար :

Վեհուռն դիւրահասկանալի է ուսում մտա-

կանի՝ ինչպէս աղետի, մեծերուն՝ ինչպէս պղծութիւններուն, ամեն մտաց յարմար, իւր հիմն է կարեկցութիւն, իւր աղբիւրներն է զգացմանց գրգռ, բանաստեղծութիւն, և երեւակայական տեսութիւն (idéal) : — Եւ կայ կը բարձրացնէ, կ'ազնուացնէ, և կը բաւաստեղծէ :

« Թատրոնը կրնայ և պէտք է որ դիւցազուններ յարուցանէ » կըսէր Սեմ Նարոյէօն, որ ստուգիւ մարդկան և իրաց փորձառութիւնը առած էր :

Թատրոնը մեծապէս օգնած է հին մանակի դիւցազնական դործոց, որոց վրայ հիմա անչափ կ'սքանչանանք մենք :

Եսթիլէոսի ՊԱՐՄԻԿԻՆ անուն ողբերգութիւնը աղբային փառաց վեհ շիրապէրն էր :

Աչքերնուդ առջին բերէք, լիճնացուց երեսը նկարուած ուրախութիւնը, սարսուռը, և հայրենասէր մեծանձնութիւնը, Սալամինեան դիւցազնական բանաստեղծութիւնը տեսնելէն վերջը :

Ի՞նչ ազաւորութիւն, ի՞նչ յիշատակ, ի՞նչ խրատ :

Ենհուն և համաշխարհական բեմ մի, (Թատրոն) ուր յաւիտենական ճշմարտութիւնը, և ընկերութեան կենսական խնդիրները կը դատուին :

Քաղաքականութիւնը ապստամբի մի մեկ նոցով, բարոյականը մտացածին անձի մի կիրքով, կրօնը կեղծաւորի մի դիմակաւ, փիլիսոփայութիւնը վանականի մի կնդուղով հոն կուգան կը խօսին, կը վիճեն, կը վճռեն ցորեկուան լուսոյն և թատեր կանդեղաց սրբառութեանը առջև :

Եւրիբիտես առաջինը եղաւ Թատրոնը այս ընդարձակ ճամբուն մէջ դնելու : Պղերգութեան ընտրութիւնը իրեն համար միջոց մի եղած էր վեհ բանախօսութիւններ ընելու :

Թատրոնը մարդկանց ընդհանուր դարացի է, մանուանդ հարստութենէ և դատախարակութենէ անձանանդ մնացողներուն :

Արոնց թէ և դատողութիւնն ու ստիկ համոզումը անհասկանալի է, բայց կը յաղթաւորին և կը յափշտակուին աջաց առջև եղած պատկերէն և առաստելէն. դատեցէք կենդանի և խօսուն առաստելի մի արդիւնքը :

Թատրոնը՝ աղայութիւնը բնական բերմամբ կը համոզէ, երկատարութիւնը երեւակայութեամբ, կատարեալ մարդն ալ դատողութեամբ կը ստիկցնէ, կը ցուցնէ, կը կրթէ օրինակաւ : —

Եւ ի՞նչ օրինակ,

Թատրոնը իր ներկայացուցած անձանց ծիծաղին ինչպէս նաև արտատուացը տակ խը բոտ մը ունի և իր ամեն գէտքերը շատ բաւեր կը պարուհակեն :

Այսքերը հրապուրել, միտքը զուարճացընել, բայց զբօսցնելով հրահանգել. ահա այս է իւր նպատակը :

Թատրոնը ամեն տեսակ գրուածներէ աւելի մոտաւոր արդեանց յառաջ բերած երկու կերպ զուարճութիւնները կը պարուհակէ իւր մէջ . կիրթ ախորժակի և զգացողութեան հաճոյքը :

Օտանը առանձնակի և միանգամայն կ'ըզգացնէ, հոն մարդ գերտան է և ժողովուրդ դատաւոր և դատախազ :

Ունիդորաց ընտիր մասը գործոյն արժեքին ուշ դնելով առանց եռանդեան և յափշտակութեան, հանգարտ մտքը ամեն բան անաշուարտ կը դատէ : Օգացման մէջ եղած պօրութիւնն ու խորութիւնը կը պահանջէ նաև նոյն զգացումները մանրամասնաբար քննելու կարողութիւնը :

Բայց ամբոխը որ իր բնական և բնածին զգացմանքներովը կը դատէ այս զգացումը աւելի կենդանի, և աւելի զգայուն է, և գորովանք գոհ կըլլայ :

Ընկիւղ առանց դատման շարժում մի առանց խորհելու բերկրանք մի և առանձ քննութեան ճաշակ մի է, թէ ինտուիտ և թէ լարու թէ ուրախութեան և թէ տրտմութեան համար :

Թատրոնին կոչումն է բարոյականութիւնը զարգացնել և հրապարակաւ հրահանգել :

Ընկիւղ բարոյականը կ'ուսուցանէ, թէ գեղեցիկութեամբ կամ բարութեամբ տղեղութեամբ, կամ չարութեամբ, անձանց աղնութեամբ ու աղնութեան և սրտառուէ կերպարանօքը, լեզուին կըքովը ու աղգեցութեամբ, հզօր և սրաշարժ հանգամանգներովը, զգացմանց մաքրութեամբն ու խանգաղատանօքը :

Հոգին բարձրացնելով միտքը կախարդելով, երևակայութիւնը գաղափարական կատարելութեամբ գրաւելով, կըքերը զարդարելով ու աղնութեանցնելով, գեղաբարդօք վեհ զգացումները խրախուսելով, վերջապէս ճշմարտին գեղեցիկին և բարւոյն զգացումը աղգելով : Ար է առաքինութեան սերը :

Ստուգիւ առկիւղ լաւագոյն միջոցն է որ միայն կարող է աղնութեան եռանդներ գրգռելու և գովելի նախանձաւորութեան ընտիր բնութիւններ շինելու :

Միւսը, նեղ և անձնատէր բայց խոհեմութեան և փորձառութեան միջոց մընէ :

Այս կը խորշեցնէ յոռութենէ վախով և հեռատեսութեամբ, կուղէ համոզել աւանդալի գործոց և մեղադրելի ընթացքի միյաւալի և տխուր հետեանքները ցուցնելով. կը յայտնէ նաև կենաց կերպ կերպ գժբախտութիւնները :

Ճարտասան է, վասն զի իրեն պատասխանող չ'ից, գիւրաւ կը համոզէ, վասն զիւրին է, աղբու է, վասն զի ամենուն հասկանալի է, վասն զի կատակաւ 'ի գործ կը դնէ :

Ընկիւղ կատակերգութեան պաշտօնն է — առաջինը — օղբերգութեան պաշտօնն պէտք էր ըլլալ — ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆԸ, երկուքն ալ կը բաւականակէ ու կ'ամբօքէ :

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ կամ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ . ԹԱԳՈՒԹԻՒՆԸ կամ ՏԻՈՒՐ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ . անունդ և ձեզ հոգ չէ . եթէ ունիս քղամիտիդ և ծիրանւոյդ տակ գաղափար մի, եթէ կեանքը զարդերուդ և կորնթական սիւներուդ տակ, եթէ սրաշարժ և մեծ բարոյական մի վախճանիդ և վերջի պատմութեանդ տակ, եթէ վերջապէս կը համոզես — եթէ բարոյականդ պայմանական չէ — եթէ գիւրութեամբ չես ուղեր հաճոյանալ, թէ կեանքդ վաղաջուկ չէ, եթէ գաղափարդ ալ հնացեալ :

Մտածէ որ քու գործոցդ պիտի կըթուին, վաղուան Թատրոնական բանաստեղծը, ապագայ մատենագիրն ու քաղաքացին :

Գործիդ մէջ պիտի կըթուին խեղճ արհեստաւորը և այն աղբափի տղան, որուն իմացական կեանքը իրեն առանդապահներէն անխնամ ձգուած է :

Նոր միտքը գրկիդ մէջ պիտի գանէ իւր արժանաւոր սնունդը, նիւթական աշխատութեամբ անցուցած օրուան իրիկունը :

Դուն կարող ես իւր հոգին յուղել, իւր սիրտը բարախել, միտքը գրաւել, իւր ատելութիւնը կամ կարեկցութիւնը գրգռել, իւր բարքը շինել կամ աւերել, զինքը յեղափոխել և վերադառնալ ստեղծել. մէկ խօսքով աւելն բանի կարող ես, անկիւղ չորս ժամ քու ձեռքդ է, դուն անոր աչացը կը խօսիս, իւր իմացականութեանը կը գիմես . . . մտածէ, քու պարտքդ մեծ է, ու սրտառիւնստութիւնդ ծանր :

Հին ժամանակուան մէջ հասարակաց խը բոտ մը էիր :

Նոր ժամանակներս աղնիւ զբօսանք մի եղար :

Այսօր ի՞նչ ես :

Պատմութիւն և Հայրենիք :

(Տես Ա. Հրէան. Թիւ 12)

Բանցմէ զատ թողի ծնողքս զընտանիս
Իմ հարազատ եղբայր ու քայր և որդեքս .
Թողի նաև սերս բարեկամքս՝ ծանօթներս
Վանտասցեցի հայրենակից եղբայրներս :

Իմ օրօրան Վատարական ձգեցի,
Տխուր երես Պօլսոյ ճամբան բռնեցի,
Կը բարեմ բայց ոտս առաջ չերթար խղճարդս
Ի հոգ, մայրիկս կարօտ կ'իսնէ՝ « Կոյ գլխոյս » :

Սաստիկ յաւէն ողորմելին թախաջաւ
Վճիռէս որդւոյս քովէն զատկին ալ չտեսաւ
« Բարեաւ մնայք » բարեկամացս ասացի
Քանի մ' եղբարց հետ մինչ Աւանց գնացի :

Հոս կտրաւ ընկերներուս կտրուան
Մինչև ամէնք գան ժողովին միանան
Հապա սկիզբն կընեն չուոյն ողջ մէկէն
Այն իրիկուն կերթան կհասնին Դռնաշէն :

Ելծմիկ մենք ալ բանիմը պանդուխտ ընկերով
Նոյն գեղ-կերթանք աղի արցունք թափելով
Երբ Լեզին անցանք Տոսպն ալ չտեսանք եղ-
բարցս հետ Լոկիր գլուխը մեզ ցոյց կուտար Վանայ բերդ :

Սիայն բերդն էր վառացելոյս միսկար
Նա ևս կորաւ՝ երբ մօտիկանք Շեղջայ դար
Հոս կարող չեմ բացատրելու մեր վշտեր
Ռուտի կլուեմ միայն կշարեմ սա կէտեր . . . :

Ուղի ինչ նստանք եղերք գետին զովացանք
Տօթ ծարաւի բռնութենէ՝ մեզմացանք
Զի Մօռ առուէն մինչև Սև գետ ջուր չկայ
Վասն այն ճամբորդ ծարաւ՝ տօթէն յաւ կզգայ :

Եյս գետ պարծանք է Թիմարոյ գաւառին
Վասն զի շատ տեղ ծախու կերթայ բերք սորին,
Բերքն է համեղ և աննման Տառեիս ձուկ
Որուն պէս ես ուրիշ երկիր չգտի զոյգ :

Ե՛ր կը բաշէ Տպիսիսեցին գէմ սորին
Մինչդեռ կլուէ նա կախեթու քաղցր գինին :
(Հարո-նակիւն)

ԾԱՆՈՒԹՈՒՄ

Երբ Յուլիս 1 թուով Ռուս-միասիրաց
ընկերութեան մի հատոտաութիւն ծանուցանե-
լով խոտանցեր էինք յաջորդ թուով մանրա-
մասն տեղեկութիւններ տալ, ուստի այս ան-
գամ այն ընկերութեան կանոնադրութիւն
ձեռքերնիս հասնելով կը հրատարակեմք, ու
բուն մէջ իր նպատակը և սկզբունքը ամբողջ
կը տեսնուի, ուս ալ մեր կողմէն աւելցնելով
թէ « որովհետև այս ընկերութեան նպատա-
կը ընթերցանութեան փափաքը տարածել է,

փասն որոյ կը խնդրուի որ ուսումնասէր՝ աղ-
քատ պատանիներ ալ արտօնութիւն ունե-
նան որոշեալ տեղ մի կամ դպրոցներ երթալ
օրագիր հանդէս և այլն կարդալ, և դպրոցի
տղայք ալ արտօնութիւն ունենան ուղած ա-
տենինն գանուած հանդէսներ ազատաբար
կարդալ ու վիճաբանել » :

ԿԱՆՈՆՔ

ՈՒՍՈՒՄՆԵՍՈՐԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. Բնկերութեան նպատակն է Լղգ ա-
յին դպրոցներուն օգտակար լրագիրներ ձրի-
ապէս նուիրել ըստ իւր կորողութեան :

Բ. Բնկերութեան տարեկան բաժինը 30
դրութիւն է, և 4 ամսեայ բաժինն 10 դրութիւն
կանխիկ վճարելի :

Գ. Բնկերութեան անդամ ստորագրուողը
10 դր. սկզբնական տուրք մը պիտի վճարէ :

Դ. Բնկերութեան անունիւ լրագիրները
վեցամսեայ կանխիկ վճարելով պիտի աւնուի :

Ե. Բնկերութեան արտաքին և ներքին
բարեկարգութիւնը տարեկան պաշտօնով 5
հոգիէ բաղկացեալ Խնամակարաց ժողովոյ
յանձնուած է, զոր կ'ընտրէ Բնհանուր ժո-
ղովն քաղանի քուէարկութեամբ :

Զ. Բնկերութեան Խնամակարաց պաշ-
տօնն է՝ Ստորագրեալ անդամոց անունը,
բաժնից թիւը, հաւաքուած գրամը, դպրոց-
ներուն անունով մէկտեղ յուղարկուած լը-
րագիրները Բնկերութեան տուժարին մէջ
արձանագրելէն զատ, ամեն ամսոյ ելեւմտից
հաշիւը և ամեն տարուան նոր ստորագրուող
անդամոց անունը անմիջապէս հրատարակել :

Է. Բնկերութեան ընծայուած լրագիր
կամ գանադիրք, և այլն, Խնամակարաց հա-
ձութեամբ կ'ընդունուի եթէ Բնկերու-
թեան նպատակին օգտակար գատուի :

Ը. Բնկերութեան յատուկ կնիք մը պիտի
ունենայ, տոմարները, լրագիրները, և այլն
կնքելու համար :

Բնկերութեան հիմնական կանոններն են
վերոյգրեալ 8 յօդուածները որ անխախտ կը
պահուի, Բնկերութենէն :

Եւսին Բնկերութեան Ժողովով Կա-
րգաւորուած Գործիչ Գրքով Գրուած :

10 Յունիս 1862 թ Կ. Պօլսո

ԽՄԲԱԳԻՐ-ՏԵՕՐԵՆ

ԹԱՎԱՍԱՍ Գ. ՊԵՏԵՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ի ՎԱԼԱԹԱ Կ. ՊՕԼՍՈՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԷՀԵՏԻՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՏԻՈՅ ՓՈՅՈՅ ԹԻՒ 17